

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

### Ժամանում Մոսկվա

Փետրվար 15-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետը, երեք և կես ժամվա հանգիստ և ապահով թռիչքից հետո, ժամը 5-ին, Իր շքախմբով ժամանում է Մոսկվայի Շերեմետևոյի միջազգային օդանավակայանը, ուր դիմավորվում է Տ. Պարգև եպիսկոպոսի գլխավորությամբ Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցու եկեղեցական խորհրդի անդամների և հավատացյալների կողմից։ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում է նաև Մոսկվայում եթովպական դեսպան նորին գերազանցություն Միքայել Էմրուն, իր հարգելի տիկնոջ հետ։

Հանուն ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի, Ամենայն Հայոց Հայրապետին ողջունում են խորհրդի անդամներ Ռժանովը և Սոլովյովը։

Նորին Ս. Օծությունը Իր շքախմբով առաջնորդվում է «Լենինգրադսկայա» հյուրանոցը։

Փետրվարի 16-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 7-ին, «Լենինգրադսկայա» հյուրանոցում, Վեհափառ Հայրապետին է այցելում Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Փետրվարի 17-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Ա. Պուզինին, որը բարի գալստյան ընդունելություն է կազմակերպում ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի։

Ընդունելությանը, որն անցնում է ջերմ մթնոլորտում, ներկա է լինում նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Փետրվարի 19-ին, ուրբաթ, հետմիջօրեի ժամը 3-ին, «Լենինգրադսկայա» հյուրանոցում, Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը և եկեղեցական վարչությունը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում են ճաշկերույթ։

Ընդունելության ներկա են լինում ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Ա. Պուզինը, տեղակալ Ռյազանովը, խորհրդի անդամներ Ռժանովը և Սոլովյովը։

Ճաշկերույթին ներկա է լինում նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Ճաշկերույթի ընթացքում, որն անցնում է ջերմ և խանդավառ մթնոլորտում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Ա. Պուզինը և Կ. Դալլաքյանը ողջույնի և բարի գալստյան ճառեր են փոխանակում։

### Վեհափառ Հայրապետի վերադարձը Մայր Աթոռ

Փետրվարի 20-ին, շաբաթ, առավոտյան ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը, շուրջ

մեկ ու կես ամսվա բացակայությունից հետո, վերադառնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Իր շքախմբի հետ։

Երևանի օդանավակայանում, Նորին Ս. Օծության ջերմորեն դիմավորում են Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, ներքին թեմերի առաջնորդները, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամներ, քահանայից դասը և հավատացյալների հոծ բազմություն։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը։

Ողջույնի, բարի գալստյան խոսքերից և աջահամբույրից հետո, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Մայր Աթոռ, օրհնելով բոլոր ներկաներին։

Մայրավանքի արևելյան մեծ դարբասի առաջ, եկեղեցական թափորով, ամպհովանու տակ, Նորին Ս. Օծությունը առաջնորդվում է Մայր Տաճար, ուր լուսարարապետ Տ. Ասողիկ սրբազանը, հանուն միաբանության և բոլոր ներկաների, սրտագին բարի գալուստ է մաղթում։

Վեհափառ Հայրապետը Իր պատասխան խոսքում ողջունում է բոլորին և համառոտակի խոսում արտասահմանում կատարած Իր այցելության և ուղևորության մասին, հաղորդելով միաժամանակ Սփյուռքի հայության ողջույնները Մայր Աթոռի միաբանության և Մայր Հայրենիքի հայ ժողովրդին։

Նորին Ս. Օծության «Պահպանիչ»-ով ավարտվում է օրվա հանդիսությունը։

Բարի գալո՛ւստ մեր սիրելի Վեհափառ Հայրապետին։

## Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին

Փետրվարի 24-ին, շաբաթի, առավոտյան ժամը 12-ին, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, նախագահության պալատում։

Նորին Ս. Օծության ուղեկցում էին Նրա շքախմբի անդամներ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Տ. Առսեն վարդապետ Բերբերյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Ընդունելությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Գ. Դալլաքյանը։

Զրույցի ժամանակ, որն անցնում է բացառիկ ջերմ մթնոլորտում, Վեհափառ Հայրապետը Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանին հաղորդում է Սփյուռքի հայության եղբայրական ողջույններն ու սրտագին բարեմաղթությունները՝ Մայր Հայրենիքի և հայ ժողովրդի բարօրության և նորանոր հաջողությունների համար։